Рамбаудъ

Ѳедоръ

891.99б
Р-95

2011-05

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ



ՅԵՐԳԵՐ

II

891.998
Թ-95

891.99մ
Թ-95
ար

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՅԵՐԳԵՐ

II

(ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ)

Շապկի նկարը
ԱՆ. ԳԱՍՊԱՐՅԱՆԻ

ՊԵՏՀՐԱՏ
ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1938

23 APR 2013

8917

2386
38

ԳԱՐՆԱՆ ԱՌԱՎՈՏ

Բարի լուսին զանգեր զարկին
Զընգզընգալեն անուշ, անուշ.
Լուսը բացվեց մեր աշխարհքին,
Ճըղճըղալեն անուշ, անուշ։

Հովտում առուն խոխոջում է,
Գըլգըլալեն անուշ, անուշ.
Քամին բարակ շընկշընկում է,
Զըլգըլալեն անուշ, անուշ։

Կռունկն յեկավ յերամ կապած,
Կրակրռալեն անուշ, անուշ,
Կաքավ քարին տաղ է կարդում,
Կըղկըղալեն անուշ, անուշ։

Հարսն ու աղջիկ հանդերն յելան,
Շորորալեն անուշ, անուշ.
Ծաղկանց բուրմունքն անմահական,
Սըլսըլալեն անուշ, անուշ։

ՄԱՆՈՒԿՆ ՈՒ ՋՈՒՐԸ

Անպոտ սարեն ուրախ ձենով
Ջուր է գալիս անցնում շենով։
Մի թուխ մանուկ դուրս է վազել,
Ձեռքն ու յերես պաղ լըվացել,
Լըվացել է ձեռքն ու յերես,
Ու դարձել է՝ խոսել եսպես.

— Դու վոր սարեն կուգաս ջըրիկ,
Իմ պաղ ջըրիկ ու անուշիկ։
— Յես են սարեն կուգամ մըթին,
Վոր հին ու նոր ձյունն է գլխին։

— Դու վոր առուն կերթաս, ջըրիկ,
Իմ պաղ ջըրիկ ու անուշիկ։
Յես են առուն կերթամ զվարթ,
Ուր ափերն են շուշան ու վարդ։

— Դու վոր այգին կերթաս, ջըրիկ,
Իմ պաղ ջըրիկ ու անուշիկ։
— Յես են այգին կերթամ դալար,
Վոր տերն է ժիր մեջն այգեպան։

ԼՈՒՍԱԲԱՑԻՆ

— Ծուղրուղու.
Աքլորը գիլ կանչեց թառին։
— Ճիկ-ճիկ, հիկ-ճիկ,
Զարթնեց մթնում ծիտը ծառին։

— Ծուղրուղու.
Խոսեց ծեգին յերկրորդ բերան.
— Հո-հո, հո-հո,
Նախիրն արդեն հանդը տարան։

— Ծուղրուղու.
Լույսը բացվեց յերրորդ կանչին։
— Վույ-վույ, վույ-վույ,
Նստեց նանը տեղի մի ջին։

ՈՒԼՈՒՆՔ

Գարունն յեկավ ամպերով,
Ամպերն յեկան անձրեվով,
Անձրեվը տանեմ արտին տամ,
Արտը ինձի ցորեն տա.
Ցորենը տանեմ ջաղացին տամ,
Ջաղացը ինձ ալյուր տա,
Ալյուրը տանեմ տաշտին տամ,
Տաշտը ինձ խմոր տա.
Խմորը տանեմ թոնրին տամ,
Թոնիրն ինձ հաց տա,
Հացը տանեմ բոշին տամ,
Բոշեն ինձ ուլունք տա.
Ուլունքը տանեմ նանիս տամ,
Նանս ինձ ծեծի, ծեծի,
Տանից քշի, դուրս անի։

ՈՒՐԱԳ ՈՒ ՍՂՈՑ

Մի լինի ուրագի պես,
Միշտ դեպի քեզ, միշտ դեպի քեզ.
Այլ յեղիր սղոցի պես,
Մին դեպի քեզ, մին դեպի մեզ։

ԳՈՒԹԱՆ

(Ժողովրդական)

Լուսը լուսացավ,
Բարին շատացավ.
Վաղ լուսաբացին
Գութան լծեցին.
Հորովել հո...

Գութանը շարած,
Հոտաղը*) շարած,
Մաճկալը մաճին,
Ձեռը ականջին.
Հորովել հո...

Գութան ջան, վարի,
Ակոսը շարի.
Թափ տուր, թեվ արա,
Շուռ տուր, սեվ արա.
Հորովել հո...

Ցանենք, արտ անենք,
Հնձենք, տուն տանենք,
Ամբարենք մեր հաց.
Որհնյալ է ասված.
Հորովել հո...

Հոտաղ — տավար արածացնող տղա, վոր նստում է գութանի հոբի կոչված լուծի վրա։

ՃԱԽԱՐԱԿ

Մանի, մանի ճախարակ,
Ներստենք բանի, ճախարակ,
Անտերին տեր, ճախարակ,
Վորբերին հեր, ճախարակ։

Լուսնյակը դուրս է յեկել,
Աչքերիս լուս է յեկել։
Լուսնի լուսով մանեմ յես,
Սիպտակ վոստեր անեմ յես,
Աղքատ որով ու լացով
Վորբեր պահեմ մանածով։

Մանի, մանի, ճախարակ,
Ներստենք բանի, ճախարակ,
Անտերին տեր, ճախարակ,
Վորբերին հեր, ճախարակ։

ԴԺԱՐ ՏԱՐԻ

Վարի, գութան չան, վարի,
Շատ է դըժար ես տարի,
Պապին տարան քյոխվի դուռ,
Հարկ են ուզում,— Տուր հա, տուր...
— Կրտամ քյոխվա, փող չունեմ։
— Չունե՞ս, Շեկոն կը տանեմ.
— Ամ՛ն, քյոխվա, քեզ դուրբան,
Շեկոն դընա թող գութան,
Գարնան անենք վար ու ցանք,
Կալը կալսենք, բերենք տանք։
Գարունը լետ դառավ ել,
Գութան լըծվեց — հորովել....
Վարի, գութան չան, վարի,
Դատենք ցորեն ու գարի,
Տանենք ածենք քյոխվի փեշ,
Վոր չը տանի մեր գոմեշ։

ԿԱԼԻ ՅԵՐԳԸ

Արի լեզ չան, Ծիրան չա՛ն.
Հորովել ա՛, հորովել ա՛...
Վոտիդ արա, ուսիդ արա,
Կալը կալսենք, անձրեվ չը գա։
Տա՛ր, ման արա, ա՛ քեզ մեռնեմ,
Դարման արա, ցավըդ առնեմ։

Դարմանը դու, ցորենը մենք
Զմեռն ուտենք, հանգիստ ապրենք։
Որը գնաց, ա՛ Ծիրան չան,
Բանը ճնաց, չան, ախպե՛ր, չան։
Վոտիդ արա, ուսիդ արա՛,
Կալը կալսենք, անձրեվը չը գա։

ՓՈՔՐԻԿ ՅԵՐԿՐԱԳՈՐԾ

Յեկավ գարուն, յեկան հավքեր,
Տաքցավ արեվ, գլլգլլան ջրեր,
Յեկան վարի — ցանքի որեր։
Կռունկն ամոլ*) արեցի,
Սագերն հորիք**) լըծեցի,
Ճնճղուկն հոտաղ վարձեցի,
Կաքավն հացվոր բռնեցի,
Արտ ունեյի՝ վարեցի,
Ցորեն, գարի ցանեցի։

*) Գուլթանի առաջին զույգ լծկանը
**) Գուլթանի վերջին զույգ յեզները։

23Բ6
38

ԽՆՈՑԻ

Հարի, հարի, խնոցի,
Մեջդ բարի, խնոցի,
Ունկըդ բարակ, խնոցի,
Մեջըդ կարագ, խնոցի։

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՀ-ՈՐ

Պատ. խմբագիր՝ Ն. Թումանյան
Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան
Սրբագրիչ՝ Թ. Հովակիմյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Մ. Կարյուն

Գլավլիտի լիազոր՝ Կ.—4691. Հրատ. № 4381.
Գատվեր 1306. Տիրաժ 6000
Թուղթ 72×110 Տպագր. 1/2 մամ.
Մեկ մամուլում 40906 նիշ. հեղինակային 1/2 մամ.
Հանձնված է արտադրության 10 դեկտեմբերի, 1937 թ.
Ստորագրված է տպագրության 25 հունվարի, 1938 թ.
Գինը 40 կ.

Գեոհրատի I տպարան, Երևան, Լենինի 65

245

ԳԻՆԸ 40 ԿՈՊ.

ОВ. ТУМАНЯН
ПЕСНИ
ГИЗ. Арм. ССР ЕРЕВАН

ՀՀ Ազգային գրադարան
NL0396495

8917